

## ԳՐԱԽՈՍՈՒԹԻՒՆ

1837—1887. ՅԵՍՆԱՄԵԱԿ Հայոց Հոդեւոր ԹԱՅՄԱԿԱՆ Դպրանոցի Երեսնար: Տիկիսի. տպարան Վարդանեանցի, 1888. քառածալ 321 երես, չորս մեծաթերթ ցուցակներով:

Ներկայ հրատարակութիւնը, իւր տեսակում, առաջին օրինակն է մեր գրականութեան մէջ. Դեռ ևս ոչ մի Ռուսա-հակ դպրոց չէ լաւէրժացրած իւր պատմութիւնը մի հրատարակութեամբ, որտեղ առաջ բերած լինէին դպրոցին վերաբերեալ պատշաճաւոր կերպով համակարգուած եղելութիւնները՝ մի երկարամենակ զօրէինանի առիթով. Հակական գրականութիւնը ունի արդար պատմութիւններ Պարիզի նախկին Մուրադեան վարժարանի, գրած հաւ Թէօփորեանի ձեռքով, Խալիպեան ուսումնարանի մասին՝ գրած Գարգիկը արքեպիսկոպոս Աքվազեանի ձեռքով և հրատարակւած նորա մահից վետով. բայց դրա գըրւած են անհատական նախաձեռնութեամբ և այլ նպատակներով, քան ներկայ հրատարակութիւնը.

Այս գիրքը նշանաւոր է ոչ միայն իւր տեսակի նորութեամբ, այլ և նորա բովանդակութեամբ և, որ աւելին է, նորանով լարուցւած բազմատեսակ խնդիրներով: Ինչ վերաբերում է վեր-

ջիններիս, գրախօսութեան մէջ տեղը չէ, որ նոցա մասին խօսւի. դոցա մնաք կը նւիրենք մի ավ լոգւած՝ բաւականանալով աւտեղ խօսել գրքի մասին միայն գրախօսական տեսակէ-տից՝ որպէս գիրք և բովանդակութիւն:

Գիրքը բաժանւած է երեք մասերի, որոնցից առաջինում ներկալացւում են կարեւոր տեղեկութիւնները Դպրանոցի գոլութեան իւրաքանչիւր տարւաչ համար առանձին-առանձին. երկրորդ մասում հրատարակութեան պաշտօնական խմբագիրները աշխատած են ամփոփել առաջին մասում առաջ բերած նիւթերը առարկա առ արկա առ արկա և իսկ երրորդ մասում զետեղւած են Դպրանոցի կանոդրութիւնները, Դպրանոցին նըւէրներ տած անձերի անունները և, վերջապէս, չորս մնձ ցուցակներ, որոնց մէջ ամփոփւած են Դպրանոցի պատմութեան բոլոր անուան ական և թւանշան ական տեղեկութիւն. ները:

Դպրանոցի պատմութիւնը բաժանած է երկու շրջանների, որոնցից առաջինը բանում է 1837—1849 թւականները, իսկ երկրորդը՝ 1857—1887 թւականները։ Դորա պատճառն այն է, որ 1849-ին թեմական Դպրանոցը փակվեց Ներսէս կաթողիկոսի հրամանով, և այն պատճառով, որ, ասում է մեծ կաթոպիլկոսը, «Անմինարիա անոնը նշանակում է սերմնարան և... ալդ մեծ անոնը դրած են մի մանկավարժարանի վերակ, որից ահա 10 տարուց աւելի է որ սերմնարանական ոչ մի արդինք չի տևել...» Իսկ ժողովրդի մանուկների համար աշխատենք շինել մանկական վարժարաններ իւրաքանչյւր եկեղեցու գաւթում... ուր ուսանեն 7—13 տարեկան մանուկներու։—Դպրանոցը կրկին բացում է 1857 թւականին, Պէտք է ասած՝ թեմական Դպրանոցի բացումը, փակումը և կրկին բացումը կապւած են եղած Երևանի թեմական կոնսիստորիակի ստեղծելու ու Երևանից Վաղարշապատ տեղափոխմելու (1846 թ.)։ և վերստին Երևան տեղափոխմելու հետ (1857 թ.)։ Առաջին շրջանը (10 տարի) բանում է ընդամենը 28 երես, իսկ 1857—1887 երեսնամեակ շրջանը՝ 229 երես։ անձիս որ, քանի մօտենում ենք մեր օրերին, անքան տեղեկութիւնները առաջ են և, օրինակ, վերջին 1886—87 թւականը բըռնում է գրքի 33 երեսը։ Ալդ բացատըրում է նորանով, որ հին տարիների համար արխիւմում նիւթերից շատերը պակաս են և, վերջապէս, Դպրանոցը առաջին տասնեակներում այն կարևորութիւնը չէր ներկազացնում, ինչ նա ունեցաւ վերջին տա-

րիներս։ Եւ արդարեն, Դպրանոցը, որ թևմական զալոցի, Ներսէս կաթոպիլկոսի ասած, մեծ անունն էր կրում՝ ոչնչով չէր տարբերում մի հասարակ ազգատիկ ծիսական զպրոցից մինչև 70 թւականների մէջերքը, քանի որ Դպրանոցը ունեցած է եղել 1876 թւականին 3 պատրաստական և միմիակն 1 հիմնական դասատուն։ Միշիան այս վերջին տասնեակ տարիներում Դպրանոցը բացեց աստիճանաբար 2-դ, 3-դ, 4-դ, 5-դ, և, վերջապէս 1887 թին, 6-դ հիմնական դասատուն, ունենալով, մինենոն ժամանակ, 3 պատրաստական դասարաններ։ Համեմատ զարդացման ալդ եղանակին՝ Դպրանոցը ունենում է ծախք։

1837—38-ին	.....	810 լ.
1845—46-ին	.....	280 »
1862—63-ին	.....	2031 »
1876—77-ին	.....	3408 »
1878—79-ին	.....	6188 »
1883—84-ին	.....	7898 »
1886—87-ին	.....	9371 »

Գիրքը մանրամասն տեղեկութիւններ է տալիս իւրաքանչյւր տարրակ ուսուցչական խմբի, տեսուչների, հոգաբարձուների մասին և ալդ տեղեկութիւնները զուրկ չեն հետաքրքրութիւնից։ Ազդպէս է, որ իմանում ենք, թէ Դպրանոցի դուռը թեան սկզբներում, 1839—41 թւականներին, տեսչի պաշտօնակատար է նշանակում ազգով լոյն ռուս քահանակ ունի Ռումանով։

Առհասարակ պէտք է ասած, որ Դպրանոցի սկզբնական տարիներում ուն-դպրոցական կարգը ազդեցութիւն է ունենում զպրոցի վերակ, 1844—45 թւականին, օրինակ Սինոդը ու-

զարկում է Սևմինարիակի համար կանոններ՝ Երևանի փոխանորդի ի համապատասխան Սինոդի առաջարկած կանոնները, որոնք սկզբում լինում են ռուսերէն կազմած։ Մինոդը, թարգմանել տալով, ուղարկում է ի գործադրութիւն (եր. 22)։ Միւս առարկաների մէջ ուսուց լեզուն համարում է վսեմ առարկա։

Ուսուցիչների ռոճիկների բաժանելու ձեմի կողմից՝ որոշում ենք շըրջանը մինչ 1860 թ. և ազդ տարուց դէսը, միան այդ թւականից սկսում են ռոճիկները բաժանել ամսէ ամիս։

Ամենակարևոր փոփոխութիւնը, որին ենթարկում է Դպրանոցը իւր գործադրան ընթացքում, կալանում է նորա կառավարութեան մէջ։ Հիմնական օրից մինչ 1860 թւականը Դպրանոցը անմիջապէս կառավարում է է տեղական կոնսիստորիակի և թեմակալ փոխանորդի ձեռքով։ 1860 թ. մարտի 23-ին Մատթէոս կաթուղիկոսի հայրապետական կոնդակով և Սինոդի նոր թւակ. սեպտ. 15-ի որոշմամբ՝ կարգուում է հոգաբարձական հասաւասութիւնը Երևանի Դպրանոցի համար։ Հետաքրքրել տալ ժողովրդին ժողովրական կրթութեան գործով, զըրդիւ նորան՝ նիւթապէս նպաստել ուսումնարանի գործութեան և առաջդիմութեան՝ ահա այն շարժառիթները, որոնք թելադրում են կաթողիկոսին ստեղծնել այդ հոգաբարձական հասաւասութիւնը։

Հոգմոր կառավարութեան բակերը սական, որպէս վկանում է մեր առաջը դրած հրատարակութիւնը, շուտով չեն իրագործւում։ Ելի գրեթէ հոգմոր կառավարութեան աղբիւներով

էմիրակն կառավարուում Դպրանոցը մինչ օրս։ Զարմանալի է ազդ կողմից Երեւանցոց, կարելի է ասել, քարասրութիւնը դէպի իրանց ազգակին Դպրանոցը։ Ո՛չ մի նկրատութիւն է անում, լինում է մի Շուշեցի Ալկասանեանց, որը նկրում է 2000 ր., Բայց ազդ օտարաքաղաքցու բարերարութիւնը օրինակ չէ դառնում Երևանցոց, անպէս որ Խակապէս միան 1878 թւականից սկսում են Երևանցիք ստորագրուել շատ թէքիչ խոշոր գումարները։ Բայց, ո՞հ, առատաձեռնութիւն, խոստմունք և գործ ակնպէս իրար հնոտ միասին են գնում, որ 1881—82 թւականին հոգաբարձութիւնը վճռում է դատ բանալ մինչև այժմ չը վճարած ստորագրողների դէմ։ Ինչ և իցէ, վիճամեռակի վերջը 1885—86 թ. անձեռնմխելի գումարի անունով կար մօտ 14.000 ր., որից սական մխելի էր եղած արդէն աւելի քան 6000 ր. ասել է թէ՛ զարոցական մշտական աղբիւները չեն բաւում սովորական ծախքերը ծածկելու համար։

Երևանի թեմական Դպրանոցում ծառախած են, աւելի կամ պակաս անուն վաստակած ուսուցիչներից և գործիչներից՝ Մելեանց Յովսէփ քահանակ, Սերովէ վարդ. (կետու եպ.), Աղափիրեան Գրիգոր վարդ. (այժմ եպ.), Զալալիեան Ռուբէն, Բէգնազարեան Ապրգիս, Տէր-Յարութիւնեան Գէորգ, Աղալիեան Ղազարոս, Քալանթարեան Դաւիթ, Բաբաջանեան Վասակ, Նաւասարդեան Բագրատ (բժ.), Տէր-Ղեւնդիւն Նիկողայոս և Յովհաննիսեան Արիսողոմ։

Տեսուչներ ունեցած է Դպրանոցը առաջին լրջանում 5, երկրորդ վերջին 30-ամյակ լրջանում՝ 9, բացի ան, որ 1867—1871 տեսչութիւն անում են թեմակալի փոխանորդները՝ Սերովը վարդ. (առժմեալ), Մեսրովը վարդ. (առժմ արքեպիսկ. ) և Մկրտիչ արքեպիսկ. Բարամեան:

Տեսուչների ցուցակից վշենք՝ Ղորդանեան Յովհաննէս (1861—1863 և 1865—67), Մելիան Յովսէփ քահանաւ 1862—65 (ընդմիջումով), Աղափիրեան Գրիգոր վարդ. (առժմեալ). 1863—64, Մտեփանէ Խորէն վարդ. 1872—73, Բէդնազարեանց Ս. (առժմք.) 1876—86 և Յովհաննիսեան Արքոսոմ 1886—88.

Դպրանոցի թէնիսիթական և թէ մըտաւոր, բայց մանաւանդ բարուական դրութիւնը, պէտք է որ շատ աննախանձելի եղած լինի. Դորա լաւագոյն ապացուցը մինք գոնում ենք ուսուցչական խմբի հոգաբարձութեանը տւած բոլոգագրի մէջ Դպրանոցի տեսչի դէմ 1878—1879 թւականին. և դա՝ նոյն տեսուչն է, որը տիսուր վշատակի արժանի գեր պիտի խաղար Երևանի Դըպրանոցից ամելի բարձր՝ Թիֆլսի Ներսիսեան Դպրոցում. Ահա թէ ուսուցչական խումբը ինչպիսի մի թուղթ գրելու է ստիպւած տեսնում իրան մի տեսչի դէմ, որը սական վակելում էր հոգաբարձութեան հովանաւորութիւնը. Առաջ ենք բերում դրքի ավտ կոտրը և extenso. «Յունաւրի 14-ին մի ընդարձակ էպուարաբութիւն են ուղարկում հոգաբարձութեանը, բացի Սարդսեանից, բոլոր ուսուցիչների ստորագրութեամբ, ուր գրում են, որ ներկաւ ուսումնական տարուակ հէնց սկըզբից շարունակ, թէ բանաւոր և թէ

գրաւոր կերպով, բողոքել են ու. Բէդնազարեանցի բարուական և մանկավարժական սխալանաց դէմ, որոնք են՝ Ա. աշակերտներին չափազանց գրաւոր և մտաւոր աշխատանքներ տալը. Բ. աշակերտներին չարաչար ծնծելը, որպիսի դիպուածում մի անգամ անպէս սաստիկ ապտակեց, որ իւր մատի մատանին կոտրուեց. Գ. առանց մանկավարժական խորհրդին հարցնելու՝ տարուակ ընթացքում աշակերտներ ընդունելն, արձակելն, արձակուածը վերստին ընդունելը և աշակերտը մի դասարանից միաւր փոխադրելն. Դ. աշակերտներին ժամերով դուրաը ցրտում կանգնեցնելը. Ե. ուսուցիչների հետ առհստարակ կոպիտ վարմունքը. Զ. ուսուցիչների դասախոսութեան ընդհատելը և անձամբ նոյնը շարունակելով, վայր ձըգիլն աշակերտաց առաջ ուսուցչի վարկը. Է. ուսուցիչներին մանկավարժական ժողովներում «էշ» անուանելը. Ը. ուսուցիչներին վիմար, անհողի, խարդախ անուանելը, որից անցեալ ամի դեկա. 29-ին ծագեցաւ մի փոքրիկ տարաբաղդ անցք և այս վերջնից՝ ներկաւ խուվութիւնը տեսչի և ուսուցչաց մէջ. Թ. իւր դասերը թողնելը և, որպէս թէ նոյն փոխարէն, ծխական դպրոցում փորձնական դասեր խօսելը, փոխանակ արդ իւր դասերից աղաստ միջոցներումն անելու. Ժ. 5-դ դասեր թողնելը և ավտ միջոցումն մանկավարժ. Խորհրդի ճիստեր կալացնելը. ԺԱ. հակերէն գրութեան մէջ ունեցած ուղղագրութեան դէմ սիսաները. ԺԲ. անպէտք դասագրքեր Դպրանոցում մացնելու համար լամառութեամբ աշխատելն. ԺԳ. վայր.

ընկնող աստղերի մասին աշակերտ-  
ներին տուած թիւր բացատրութիւնը,  
երեխ ձաւմարան գիտելեաց» զրքից  
օդուտ քաղելով: ԺԴ. երեք ամիս շա-  
րունակ միան կիւրոսի պատմութիւն  
ուսուցանելը: ԺԵ. առհասարակ ման-  
կավարժական խորհուրդների մէջ իւր  
կարծիքը միշտ լամառութեամբ պահ-  
պանելը և ուսուցիչների կարծիքը  
բացէ ի բաց մերժելը: ԺԶ. աշակերտ-  
ներին դէպի ուսուցիչները զրդուելը և

ալն և ալն»: Եւ նոյն ալդ մարդը 10  
տարի տեսչութիւն արեց Երևանի  
Դպրանոցում, որպէս վկալում է ներկաչ  
գիրքը:

Գիրքը կազմած է խնամքով, բո-  
վանդակում է հարուստ նիւթեր, որոնք  
դասաւորած են խելացի խմբագրու-  
թեամբ: Բայց թէ արդեօք որքան վա-  
կասար է անձեռնաս Ենք դատելու

ՆԱԽԱՍՏԱՐԴԵԱՆՑ ՏԻԳՐԱՆ—«ՀԱՅ-ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ», ԶՈՐՐՈՐԴ  
ԳԻՐՔ: Թիֆլիս, 1888. տպ. Վարդանեանի, 8-Ճալ, տառ № 12,  
գինն է 50 կ.: Նոյնը՝ Հինգերորդ գիրք, 1889 թ., 80 երես և յա-  
մելած «Արարատեան բարբառ» (բառարան) երես 80—143: 1889  
թ. գինն է 50 կոպ.:

Այն ժամանակներից, երբ գերմա-  
նացի Յակովը Գրիմմը, հայրենական  
լեզուի, գրականութեան և հնագիտու-  
թեան գիտնականօրէն ուսումնասիր:  
լու ուղղութեան հիմնադիրը, իւր եւ-  
րաբ վիճելմ'ի հետ հրատարակեց  
«Մանկական և տնակին հէքիաթները» (Kinder-und-Hausmaerchen), երեք  
հատոր, 1812 թականին, «Գերմանա-  
կան զրուցներ» (Deutsche Sagen),  
երկու հատոր, 1816-ից մինչ 1818 թ.  
«Իրանդացոց կախարդական հէքիաթ-  
ներ» (Irische Elfenmaerchen), 1826  
թ., — ժողովրդական աւանդութիւն-  
ների, հէքիաթների, առածների և ալն  
ժողովնելը նաև միւս երկրներում դար-  
ձաւ և կարեոր և պատւառ գրական  
գործ: Ալդ հէքիաթները և աւանդու-  
թիւնները, զրւած աշնակու, ինչպէս  
ժողովրդը պատմում է, մնձ նիւթ է

տալիս գիտնականներին, որոնք ու-  
սումնամիրում են մի ազգի լեզուն,  
նրա բանաստեղծական ոգին, ժողո-  
վրդական հաւատավեճները և ալն և  
ալն: Հէքիաթների հստ կապւած է  
նաև մանկական գրականութեան մի  
հիւզը, որը ժողովրդական հէքիաթնե-  
րից նիւթ է քաղում անընականի մէջ  
և զարձութիւն զոնող մանկական  
վառ երևակալութիւնը զբաղեցնելու  
համար:

Մեզանում գրականութեան ալդ  
ճիւզը նոր է սկսում զարգանալ-  
բաց որ ուրախալին է, ալդ զործի  
մէջ արդէն մտել է գիտակցութիւն,  
ժողովնել հէքիաթները և աւանդու-  
թիւնները բարուվին ալնպէս, ինչպէս  
նոքա ժողովրդի բերանով պատմում  
են, կարող է միան նոցա գիտական  
և կրթական նշանակութեան գիտակից